ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԸՍՏ ԻՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Ս. Ա. ՇԱՀԲԱԶՅԱՆ

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ փիլիսոփայության պատմության բնագավառում իր ուրույն տեղն ունի Իսահակ Լազարի Հարությունյանը։

Նա հայտնի է իբրև մանկավարժ, սակայն հանդես է եկել նաև բազմաթիվ աշխատություններով, որոնցում արծարծել է փիլիսոփայական, հոգեբանական, գեղագիտական, էթիկական և տրամաբանական մի շարք խնդիրներ։

Իսահակ Հարությունյանը ծնվել է 1863 թ. Թիֆլիսում, դերձակի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստանալով Գրիգոր Մատինյանի, իսկ այնուհետև Ներսիսյան դպրոցում, 1883 թ. մեկնում է Գերմանիա բարձրագույն կրթություն ստանալու։ Սովորելով Լայպցիգի և Իենի համալսարանների փիլիսոփայության ֆակուլտետներում, դասախոսություններ է լսում փիլիսոփայությունից, մանկավարժությունից, հոգեբանությունից, տրամաբանությունից և այլն։

1888 թ. ավարտելով համալսարանական լրիվ դասընթացը և վերադառնալով հայրենիք, պայքար է ծավալում հայ ժողովրդի մտավոր և բարոյական վերածնության համար՝ ուսուցչության հետ միասին, իրեն նվիրելով հասարակական, գրական և գիտական գործունեության։

Դեռևս ուսանողական տարիներին Իս. Հարությունյանը Լայպցիգի հայ ակադեմիական ընկերության հիմնադիր անդամ էր և նախագահ։ Վերադառնալով հայրենիք, նա եղել է «Կովկասի հայ գրողների ընկերության», «Կովկասի հայ ուսուցիչների և վարժուհիների միության», «Կովկասի հայոց հրատարակչական ընկերության», «Կովկասի հայոց բարեգործական ընկերության», «Նոր դպրոցի» և այլ միությունների և բարեգործական ընկերությունների հիմնադիր անդամ։

Հասկանալով, որ հայ ժողովրդի փրկությունը կախված է սոցիալիստական հեղափոխությունից, նա աշխատել է նպաստել հեղափոխության գործին։ «Թեև պատիվ չեմ ունեցել հեղափոխական լինելու, սակայն միշտ համակրել եմ և 1920—1921 թթ. իմ դռները լայն բաց եմ արել բոլշևիկյան կուսակցության համար, պատսպարելով իմ հարկի տակ կուսակցական ընկերներին, նրանց անլեգալ գրականությունը, կնիքը, փոքր տպագրական մեքենան և այլն, և այլն»[1]։

Բեղուն է Հարությունյանի գործունեությունը գրականության ասպարեզում։ Նա թղթակցել է հայկական տարբեր պարբերականների՝ 250-ից ավելի հոդվածներով հանդես գալով «Արձագանքում», «Տարազում», «Մշակում», «Լումայում», «Արշալույսում», «Գրական հանդեսում» և այլն[2]։ Նրա գրչին

---

[1] Ն. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Իս. Հարությունյանի ֆ., ձեռագիր № 12։

[2] Իս. Հարությունյանի «Ռուսահայ պանգիտին նամակները»՝ լույս տեսած 1886—1888 թթ. («Արևելյան սամուրում»), Ռ. Նանումյանը անհիմն կերպով վերագրել է Վ. Փափազյանին։

են պատկանում նաև 35 ինքնուրույն և թարգմանական մեծածավալ գրքեր։ Առանձնակի ուշադրության են արժանի «Հայոց գիրը», որն արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակի, «Հոգեբանություն», «Տրամաբանություն», «Գերմանիայի մանկավարժական բարձրագույն հաստատությունների գործունեությունը և հայ ուսանողները», «Իմ օրագիրը» և այլ աշխատություններ։

1928 թ. Իս. Հարությունյանը մահանում է՝ թողնելով հարուստ գրական և գիտական ժառանգություն։

Իս. Հարությունյանի «Տրամաբանություն» գիրքը թեև նախատեսված էր որպես ուսումնական ձեռնարկ, այնուամենայնիվ այնտեղ շոշափվել են այնպիսի հարցեր, որոնք վկայում են նրա խոր և լայն տրամաբանական իմացության և ինքնուրույն մտածողության մասին։

Մի կողմից գիտությունների հրամայական պահանջը, կապված բուրժուազիայի զարգացման հետ, իսկ մյուս կողմից դասագրքերի և գրագետ ուսուցիչներ պատրաստելու խնդիրը, պատճառ հանդիսացան, որ Իս. Հարությունյանը ձեռնարկի տրամաբանության, իսկ ավելի ուշ, հոգեբանության դասագրքեր գրելուն։

Ըստ Իս. Հարությունյանի յուրաքանչյուր զարգացած մարդ պետք է տիրապետի այդ երկու գիտություններին, որովհետև առանց տրամաբանական օրենքների իմացության, դժվար է ինքնուրույն հայացք ունենալ զանազան գիտական և հասարակական խնդիրների մասին։ Ուսուցչի պաշտոնն ու պարտավորությունն է, գրում է նա, կրթել նոր սերնդի «հոգին ու միտքը», իսկ դա հնարավոր է, եթե ուսուցիչը ելնում է հոգեբանական և տրամաբանական օրենքներից։ Իս. Հարությունյանը գտնում է, որ ուսուցիչը չպետք է բավարարվի միայն դիտելիքներ հաղորդելով, այլ պարտավոր է աշակերտին սովորեցնել նաև մտածելու եղանակ, որը հնարավոր է ձեռք բերել միմիայն տրամաբանական ուսման շնորհիվ։ Այդ կապակցությամբ նա նշում է, որ ինչպես մարդու մարմինը միմիայն կերակուր ընդունելով չի կարող առողջ, ամրակազմ ու ճկուն լինել, այնպես էլ «միտքը միմիայն գիտություններից առնված տեղեկություններով չի կարող պարզ և ուժեղ և գործոն լինել»[3]։ Նրա կարծիքով՝ լավ ուսուցիչ լինելու անհրաժեշտ պայմանը «մեթոդիկայի կամ դասավանդման եղանակի գիտությունն է», իսկ վերջինս էլ հենվում է հոգեբանական և տրամաբանական օրենքների վրա։

Իս. Հարությունյանը, իր տրամաբանության ձեռնարկը պատրաստելիս օգտվել է հիմնականում Վոնդտի, Շտրյումպելի, Օյկենի և ուրիշների աշխատություններից, բայց չի կորցրել իր ինքնուրույնությունը տրամաբանության

(Տե՛ս Վրթանես Փափազյանը գրականության մասին, տեքստը կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Ռուզան Նանումյանը, Երևան, 1962, էջ 5, 15, 251)։ Այդ նամակին պատկանում է Իս. Հարությունյանին, որը հաստատվում է հետևյալով. Իս. Հարությունյանը տակավին 1885 թ. «Պանդուխտ ռուսահայ» ծածկանվամբ հրատարակել էր «Ողբ ի վերա փակման դպրոցաց Ռուսիա հայոց» չափածո գրվածքը։ Արդ, գործ ունենք տարբեր առիթներով գործածված նույն ծածկանվան հետ։ Բացի այդ՝ պահպանվում է Իս. Հարությունյանի կազմած իր իսկ աշխատությունների մատենագիտությունը, որտեղ անվանապես հիշված է նաև նշված աշխատությունը։ (Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Իս. Հարությունյանի ֆ., ձեռագիր № 13։

3 Իս. Հարությունյան, Տրամաբանություն, Տփխիս, 1895, էջ է։

էությունն ու ատաղձը կազմող ելակետային հարցերում։ Օրինակ՝ տրամաբանության, որպես գիտության, նրա առարկայի ճշտության և ճշմարտության հարաբերության, հասկացությունների, ինդուկտիվ և դեդուկտիվ մտահանգումների, տրամաբանական մեթոդների և դրանց փոխհարաբերության հարցերում չկրկնելով հիշյալ հեղինակներին և նույնիսկ որոշ հարցերում հակադրվելով նրանց, Իս. Հարությունյանը հանգում է մատերիալիստական ըմբռնման։ Նկատի ունենալով, որ հիշյալ աշխատությունը առաջինը պետք է լիներ թիֆլիսահայ իրականության մեջ, նա գործածված մասնագիտական տերմինների հետ նշում է նաև դրանց լատինական հոմանիշները։ Բացի սրանցից, օգտվելով հայերեն հին ձեռագրերից և վենետիկյան հրատարակություններից, նա երբեմն օգտագործում է հայերեն նույնանիշ տերմիններ[4]։ Նրա ինքնուրույնության մասին է վկայում նաև այն փաստը, որ աշխատության մեջ բերված օրինակները վերցված են հայ իրականությունից։

Իս. Հարությունյանը գտնում է, որ տրամաբանությունը գիտություն է, որը ուսուցանում է ճիշտ մտածելու կանոնները, իսկ նրա նպատակն է «ճիշտ մտածելու եղանակի որոշումը»։

Տրամաբանությանը, որպես գիտության, այսպիսի սահմանում են տվել նաև Վ. Վունդտը, Բ. Էրդմանը, Լ. Շտրյումպելը, Թ. Լիպպսը և այլն։ Բայց հիշյալ հեղինակները իրենց եզրակացություններում հանգեցին այն սխալ մտքին, որ տրամաբանությունը, եթե չի նույնանում հոգեբանության հետ, ապա կազմում է նրա մի ճյուղը, և կանգնեցին տրամաբանության հոգեբանական ուղղության (պսիխոլոգիզմ) դիրքերում։

Իս. Հարությունյանը նույնպես ելնելով հիշյալ սահմանումից, ի տարբերություն պսիխոլոգիզմի, իր եզրակացություններում հանգում է տրամաբանության, որպես գիտության մատերիալիստական ըմբռնմանը։

Ըստ նրա, մտածողությունը, ինչպես նաև «զգալն ու կամենալը, մարդկային հոգվո գլխավոր գործողություններից մեկն է, ուստի և բնականաբար պետք է լինի հոգեբանության առարկա։ Այսպիսով,— շարունակում է նա,— տրամաբանությունն, ըստ երևույթին, հոգեբանության մի հատվածը պետք է լինի. բայց այդպես չէ... Թեև այդ երկու գիտություններն էլ իրենց հետազոտության նյութն են շինում մարդկային միտքը, սակայն տարբեր եղանակներով»[5]։ Հոգեբանությունը ցույց է տալիս, թե ինչպես են առաջանում մտապատկերները, թե ինչպես նրանք, «բնական մտածողության» շնորհիվ տարբեր կապակցություններ կազմելով, աստիճանաբար վեր են ածվում հոգեբանական «գաղափարների»[6]։ Իսկ տրամաբանական հասկացությունները հոգեբանական «գաղափարներից» տարբերվում են նրանով, որ առաջիններն առավել պարզ են ու որոշակի, և հանդես են գալիս լեզվի մեջ։ «Մտավոր գործողությունն ինքնըստինքյան հարկադրված է լեզվի հետ կապակցվելու, որովհետև առանց այդ կապակցության մտածմունքը չի կարելի արտահայտել և բացատրել, մտապատկերը չի կարող գաղափար դառնալ»[7]։

---

4 Նույն տեղում, էջ Թ։

5 Նույն տեղում, էջ 17։

6 «Գաղափար» տերմինը Իս. Հարությունյանը գործ է ածում «հասկացություն» իմաստով։

7 Իս. Հարությունյան, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 40։

Ինչպես տեսնում ենք, Իս. Հարությունյանը որոշակիորեն տարբերում է «հոգեբանական տարրերը» տրամաբանականից։ Տրամաբանական հասկացությունները ոչ թե հոգեբանության, այլ տրամաբանության առարկա են։ Հոգեբանությունը, նրա կարծիքով, ցույց է տալիս մտածողության առաջացման բնական ճանապարհը, իսկ տրամաբանությունը մտքի ձևերն ընդունում է իբրև պատրաստի։ Հոգեբանությունը զբաղվում է հոգեկան երևույթների բացատրմամբ, իսկ ձևական տրամաբանությունը քննարկում է մտածողությունը միայն կառուցվածքի տեսանկյունից, վերանալով նրա կոնկրետ բովանդակությունից։ Իս. Հարությունյանը տրամաբանության առարկան է համարում «Միմիայն զուտ և ձևական մտածմունքը»[8]։

Նա տրամաբանությունը համարելով տեսական գիտություն, գտնում է, որ նրա օրենքներն ու կանոնները պետք է կիրառվեն բոլոր գիտությունների մեջ, նրա պահանջները մյուս գիտությունների համար պետք է օրենքի նշանակություն ունենան։ Կապված չլինելով կոնկրետ (որոշակի) նյութի հետ, տրամաբանության կանոնների բացատրության համար կարելի է օրինակներ վերցնել թե բոլոր գիտություններից և թե առօրյա կյանքից։

«Մտածման անհուն զանազանակերպությունը կարելի է սահմանափակել,— գրում է նա,— մտքի ընդհանուր ձևերի մի տրոշ թվով և այդ ձևերը կարելի է հետազոտել առանց ի նկատի ունենալու դրանց սկզբնական տարրերի մասնավոր բնավորությունը»[9]։ Իսկ որո՞նք են այդ ընդհանուր ձևերը, որոնք կազմում են տրամաբանության առարկան։ Դրանք են հասկացությունները, դատողություններն և մտահանգումները։

Նա գտնում է, որ տրամաբանական ձևերն ու կանոնները օբյեկտիվ իրականության ծնունդ են և դրա համար մեր մտածողությունը ճշմարիտ է, երբ համապատասխանում է իրականությանը՝ թե «նյութի» և թե «ձևի» կողմից։ Իսկ մտածողության «նյութը կամ բովանդակությունը կազմող տարրերը, «ընդունելի է» կամ «անընդունելի», նայած այն բանին, թե նկատի ունեցած հասկացությունները համապատասխանում են օբյեկտիվ իրականությանը թե ոչ[10]։ Նա մտածողության ձևը նույնպես բաժանում է «ուղիղի» կամ «անուղիղի»։ «Մտածողության ձևն ուղիղ է կամ անուղիղ, նայելով թե մտածողության նյութի (բովանդակություն կազմող տարրերի— Ս. Շ.) կապակցությունը համապատասխանում է նրա պարունակությանը, թե ոչ»[11]։ Այստեղից Իս. Հարությունյանը եզրակացնում է, որ «մի որևէ միտք ճշմարիտ է, ուրեմն, երբ ընդունելի է ըստ նյութի և ուղիղ է ըստ ձևի»[12]։

Ըստ Իս. Հարությունյանի՝ կա երկու տեսակ մտածողություն՝ պարզ կամ տարրական և բարդ կամ «սիստեմատիկական»։ Հիմք ունենալով մտածողության այսպիսի դասակարգումը, նա, տրամաբանությունը նույնպես բաժանում է երկու մասի՝ տրամաբանության տարրական ձևերի ուսմունքի և «սիստեմատիկական» ձևերի կամ գիտական ուսմունքի։

Նա գտնում է, որ «տարրական ձևերը» գործ են ածվում առօրյա կյանքում, սովորական մտքերի արտահայտման ժամանակ, իսկ գիտականը արտահայտ-

---

8 Իս. Հարությունյան, Տրամաբանություն, էջ 12։
9 Նույն տեղում, էջ 14։
10 Նույն տեղում, էջ 18։
11 Նույն տեղում, էջ 19։
12 Նույն տեղում։

վում է գիտության մեջ։ Տրամաբանության տարրական մասը զբաղվում է հասկացություններով, դատողություններով և մտահանգումներով, իսկ գիտական ուսումնասիրության առարկա են բացատրությունները, որոնք նա նույնացնում է սահմանման հետ, բաժանումները, ապացույցները և տրամաբանական մեթոդները։ Վերջիններից է կախված իմացության որոշակիությունը, կատարելիությունը, հիմնավորվածությունը և հետևողականությունը։

Նա գտնում է, որ յուրաքանչյուր մարդ մտածողության միջոցով կարողանում է ճանաչել իրեն շրջապատող առարկաները, բնական իրերը և այլն։ «Սակայն այս ճանաչողությունները մնում են առանձնացված մարդուս գիտակցության մեջ. դրանց կարգի բերելը և մի սիստեմատիկական ամբողջություն կազմելը գիտության գործն է»[13]։

Քանի որ, ըստ Խ. Հարությունյանի, տարբեր գիտություններ ունեն ընդհանրություններ զուտ տրամաբանական տեսանկյունից, ապա գիտական սիստեմներ կառուցելիս այն հասկացությունները, որոնք կազմում են գիտական մտածողության տարրերը, պետք է պարզ բովանդակություն ունենան, որին կարելի է հասնել բացատրությունների միջոցով։ Ուսումնասիրության ենթակա հասկացությունները պետք է ունենան պարզ և որոշակի ծավալ, որին հնարավոր է հասնել բաժանումներով։ Ամբողջի մասերի մեջ եղած դատողությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված։ Դա հնարավոր է կատարել ապացույցներով, որոնք ճանաչողությանը հաստատուն հիմք են տալիս։ Նրա կարծիքով՝ հասկացությունների հետազոտության եղանակը պետք է համապատասխանի առարկայի հատկությանը և մարդու «ըմբռնման կարողության օրենքներին»։

Վերը շարադրվածից բխում է, որ ըստ նրա, գիտական սիստեմներ կառուցելիս պետք է մեր մտածողությունը լինի որոշակի, հետևողական, ապացուցված և հիմնավորված։ Իսկ դա նշանակում է, որ ամեն մի գիտական մտածողություն պետք է հաշվի առնի տրամաբանության հիմնական օրենքները.

Մյուս հարցը հասկացության նրա ըմբռնումն է։ «Մի իրի գաղափարն (հասկացություն—Ս. Շ.) ասել, նշանակում է բացատրել, թե ի՞նչ է այդ իրը, կամ թե ի՞նչ պետք է հասկանալ դրանով»[14]։

Իսկ հատկացության էության բացահայտման համար պետք է նկատի ունենալ «այն մշտական (էական—Ս. Շ.) հատկությունը, որի մասին անհրաժեշտ կերպով պետք է մտածի յուրաքանչյուրը, եթե կամենում է ըմբռնել այդ իրի ճիշտ էությունը և զանազանել մյուս իրերից»[15],— գրում է Խ. Հարությունյանը։

Որևէ հասկացություն կազմելու համար, ըստ նրա, պետք է խուսափել հասկացության սուբյեկտիվացումից, որովհետև մի իր կարող է մի հասկացություն ունենալ և անթիվ մտապատկերներ։ Մի իրի մասին եղած հասկացությունը չի բազմանա, «եթե շատ անգամ նույն իրը պատկերացնեն կամ թե մի անձն նույն իրը շատ անգամ պատկերացնե»[16]։ Բոլոր կողմնակի մտապատկերները պետք է հեռացնել (վերացարկման միջոցով—Ս. Շ.)։ Մի իրի բազ-

---

13 Նույն տեղում, էջ 173։
14 Նույն տեղում, էջ 24։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում, էջ 25։

մաթիվ մտապատկերների ընդհանուրը, հասկացություն է։ Օրինակ, «անասուն» հասկացությունը կազմելու համար պետք է ըստ հնարավորին շատ կենդանիների տեսակներ ներկայացնենք մեր գիտակցության մեջ և հետո քննենք, թե որ հատկություններն են ընդհանուր բոլորին և որոնք են հատուկ միայն որոշ տեսակների։ Այդ վերջինները պետք է հեռացնենք գիտակցությունից և միացնենք միայն ընդհանուր հատկությունները։ Եվ իբրև «ընդհանուր հատկություն բոլոր անասունների համար կարելի է ասել, որ նրանք գործարանավոր էություններ են, որ զգում են և ազատ կամ ինքնակամ շարժվում են»[17]։

Ըստ Իս. Հարությունյանի՝ ամեն մի հասկացություն ունի իր բովանդակությունն ու ծավալը։ Ընդ որում, հասկացության բովանդակությունը կազմում է նրա բոլոր էական հատկությունների գումարը, իսկ այն բոլոր առարկաները, որոնք մտնում են այդ հասկացության մեջ, կազմում են հասկացության ծավալը։ Սակայն «ճիշտ չէր լինի, գաղափարի պարունակությունը (բովանդակությունը—Ս. Շ.) բացատրել իբրև «գումար» իր հատկությանց, որովհետև գումարի համար գումարելիների դասավորությունը նշանակություն չունի, այնինչ գաղափարների հատկությունների տարբեր դասավորությունը փոփոխության է ենթարկում գաղափարների պարունակությունը»[18]։

Ելնելով բովանդակա-ծավալային հակադարձ համեմատականության հարաբերության ըմբռնումից, նա հասկացությունները բաժանում է պարզի և բարդի, համեմատելիի և անհամեմատելիի, հավասարի կամ նույնակերպի, զանազանի և ազգակիցների, նմանի և աննմանի, համաձայնի և հակառակի և այլն։

Իս. Հարությունյանը «նույնակերպ» հասկացությունների մեկնաբանման ժամանակ զգուշացնում է հարցի մեխանիստական ըմբռնումից։ «Իսկապես, տրամաբանորեն կատարյալ նույնակերպ գաղափարներ չեն կարող գոյություն ունենալ...։ Սովորաբար նամանուն կոչված գաղափարները, որ հավասար ծավալ, բայց փոքր ինչ տարբեր պարունակություն ունեն, ընդունվում են իբրև նույնակերպ»[19]։ Այսպիսի հասկացությունները ծառայում են նույն իրի կամ առարկայի բազմակողմանի ուսումնասիրությանը, մատնանշելով նրա այս կամ այն էական հատկությունը։

Հիմք ունենալով հասկացությանը համապատասխանող առարկաների իրական գոյության եղանակը, նա հասկացությունները բաժանում է «իրականի» (կոնկրետ—Ս. Շ.) և վերացականի, նկատի չունենալով այն հանգամանքը, որ կոնկրետն իր բնույթով վերացական չէ կամ վերացարկման արդյունք չէ։ Ըստ նրա՝ այնպիսի տրամաբանական գործողությունների շնորհիվ, որոնցից են «վերացումն» ու «որոշումը» (ընդհանրացումն ու սահմանափակումը—Ս. Շ.) հնարավոր է կոնկրետ հասկացություններից անցում կատարել աբստրակտ հասկացություններին և հակառակը։ «Վերացումը բարձրանում է աստիճանաբար մինչև ամենավերջին, ամենաընդհանուր գաղափարները (կատեգորիաներ), որոշումն իջնում է մինչև ամենաստորին, մասնավոր գաղափարները»[20]։

17 Նույն տեղում, էջ 26։
18 Նույն տեղում, էջ 34։
19 Նույն տեղում, էջ 51։
20 Նույն տեղում, էջ 44։

Հիմք ունենալով հասկացության մեջ պարունակվող իրերի քանակը, նա դրանք բաժանում է «հատուկ» (եզակի—Ս. Շ.) «հասարակ» (ընդհանուր—Ս. Շ.) և «հավաքական» հասկացությունների։

Այն հասկացությունները, որոնք ունեն միայն մի առարկա, հատուկ են, իսկ «եթե գաղափարը համապատասխանում է ոչ թե մի, այլ բազմաթիվ առարկաների, այն ժամանակ այս առարկաներն ունեն այնպիսի հատկություններ, որոնք համաձայնվում են միմյանց հետ և պատկանում են բոլորին. սրանք կոչվում են հասարակ գաղափարներ»[21] (հասկացություն—Ս. Շ.)։ Հավաքական հասկացությունները ընդհանուր հասկացություններից տարբերվում են նրանով, որ վերջիններս պատկանում են բազմաթիվ առարկաներից յուրաքանչյուրին, իսկ առաջինները՝ բոլոր առարկաներին։

Իս. Հարությունյանը հասկացությունների նախորդ ձևերը հարաբերության մեջ դնելով վերջին ձևերի հետ, ստանում է հասկացության նոր տեսակներ. «Իրական հատուկ» (կոնկրետ-եզակի—Ս. Շ.), որը համապատասխանում է անհատական առարկաներին, վերացական եզակի, որը համապատասխանում է միայն մի իրի հատկությանը. օրինակ՝ «անմահ (հոգի) ամենագետ», «ամենաբարի (աստված)» և այլն, վերացական ընդհանուր՝ սպիտակ, գեղեցիկ և իրական ընդհանուր՝ տուն, սեղան և այլն։

Ամփոփելով հասկացությունների մասին ուսմունքը, պետք է ասել, որ նրա կարծիքով՝ հասկացությունները օբյեկտիվ իրականության ծնունդ են, օբյեկտիվ իրականության առարկաներն են պայմանավորում նրանց գոյությունը։ Ի տարբերություն մտապատկերների, հասկացություններն օժտված են համընդհանրությամբ և անհրաժեշտությամբ և տրված են լեզվի մեջ։ Հասկացությունների կազմավորման հիմքում ընկած են այնպիսի տրամաբանական գործողություններ, ինչպիսիք են համեմատությունը, վերլուծությունն ու բաղադրությունը, վերացարկումն ու ընդհանրացումը։

Կանգնած լինելով ավանդական տրամաբանության դիրքերում, նա գրտնում է, որ մի նոր դատողության առաջացումը մեկ կամ մի քանի դատողություններից, կոչվում է մտահանգում կամ, ինչպես ինքն է գտնում՝ «եզրակացություն»։ Ամեն մի մտահանգում ունի իր «նյութն» (մտահանգման տարրերը—Ս. Շ.) ու ձևը։ Մտահանգման տարրերը կազմում են դատողության մեջ եղած հասկացությունները, իսկ այդ հասկացություններից մտահանգում առաջացնելու եղանակը կազմում է ձևը։

Նա մտահանգումները հիմնականում բաժանում է երկու մեծ խմբի՝ «իսկական» կամ «միջնորդական» և «ոչ իսկական» կամ «անմիջական»։ Իս. Հարությունյանը թերագնահատում է անմիջական մտահանգումները, գտնելով, որ դրանք մտածողության զարգացմանը չեն նպաստում։ Մեր կարծիքով նման մոտեցումը սխալ է, որովհետև ինչպես միջնորդավորված, այնպես էլ անմիջական մտահանգումները մեծ նշանակություն ունեն գիտական հետազոտության բնագավառում։ Նրանք ավելի ճշգրտում և առավել հստակ են դարձնում մեր դատողությունները և դրանով ձեռք են բերում մեծ ճանաչողական արժեք։

Միջնորդավորված մտահանգումները բաժանելով «արտածականի» և «ներածականի», այսինքն դեդուկտիվի և ինդուկտիվի, գտնում է, որ դեդուկ-

---

21 Նույն տեղում, էջ 27։

տիվ մտահանգման ժամանակ մեր միտքն ընթանում է ընդհանուրից դեպի մասնավորը, իսկ ինդուկտիվի դեպքում՝ հակառակը։ «Արտածությունը հիմնվում է ընդհանուրի վրա, դրա հետ հարաբերության մեջ է դնում մասնավոր դիպվածը և այդպիսով մասնավոր եզրակացություն է անում։ Իսկ ներածությունը հիմնվում է մասնավոր դիպվածի վրա, դրա հետ հարաբերության մեջ է դնում ընդհանուրը և այդպիսով վերջինիս միջնորդությամբ ընդհանուր եզրակացություն է անում»[22]։

Իս. Հարությունյանը գտնում է, որ տրամաբանությունը հիմնականում օգտվում է դեդուկտիվ մտահանգումներից, բայց միաժամանակ չժխտելով նաև ինդուկտիվ մտահանգումների դերը, գրում է. «մասնավոր երևույթների գիտենալը, դրանց միմյանց հետ համեմատելը և այդ մասնավոր երևույթներից ընդհանուր գաղափարների կազմելը՝ տրամաբանական ընդհանուր կանոնների անհրաժեշտ լրացումն են կազմում»[23]։

Ինչպես տեսնում ենք, նա, չընդունելով ինդուկտիվ և դեդուկտիվ մտահանգումների դիալեկտիկական միասնությունը և դրսևորելով մեխանիստական հայեցակետ, թերագնահատում է ինդուկտիվ մտահանգումների դերը, համարելով նրանց սոսկ տրամաբանական կանոնների անհրաժեշտ լրացումներ։

Հետաքրքրական են նաև Իս. Հարությունյանի արտահայտած մտքերը տրամաբանական մեթոդի մասին։

Ըստ նրա, տրամաբանական կամ գիտական մեթոդը պետք է ցույց տա այն միջոցները և ուղիները, որոնցով հնարավոր է գտնել գիտությունների տարրերը կազմող ընդհանուր ճշմարտությունները (նախադրյալները)։ Իսկ այնուհետև ճանաչված կամ գտած «իմացությունները» պետք է կապակցի և սիստեմի բերի։

Մեր ստացած տպավորությունները, շարունակում է Իս. Հարությունյանը, որով կարողանում ենք իրական աշխարհի հետ հարաբերություն ունենալ, միշտ լինում են առանձին-առանձին։ Դրանք լինում են առանձին իրեր և առարկաներ, հոգեկան առանձին գործողություններ, բայց ոչ երբեք սեռային հասկացություններ և կանոններ։ Դիտողության այդ պակասը, պետք է լրացնել մտածողությամբ և դիտարկված առանձին-առանձին երևույթներից բխեցնել ընդհանուր օրենքներ։ Մենք միայն այն ժամանակ ենք համոզվում մեր իմացության ճշմարտացիությանը, երբ մասնավորն ու անհատականը ընդհանուրի պարունակության մեջ ենք գտնում։ Ուրեմն, տրամաբանական մեթոդի իսկական խնդիրն է ցույց տալ մասնավորի և ընդհանուրի միջև եղած կապը։ Իսկ դա հնարավոր է կատարել «ներածական» (ինդուկտիվ—Ս. Շ.) և «արտածական» (դեդուկտիվ—Ս. Շ.) մեթոդներով։

Եթե ինդուկտիվ մեթոդը, դիտողություններով ու գիտական փորձերով, աշխատում է մասնավորից ընդհանուր սկզբունքներ առաջացնել, ապա դեդուկտիվ մեթոդն սկսում է «բարձրագույն սկզբունքներից» խիստ տրամաբանական եղանակով դուրս բերել մասնավորն ու անհատականը։ «Արտածական մեթոդն իր գործողության իբրև սկզբունք կամ սկզբնակետ՝ վերցնում է ներածության հետևանքները և աստիճանաբար մասնավորում է դրանց»[24]։

---

22 Նույն տեղում, էջ 115։

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, էջ 229։

Երկու մեթոդներն էլ առանձին վերցրած թերի են, սահմանափակ։ Միայն ինդուկտիվ մեթոդների գործածությունը կդժվարացներ և նույնիսկ անհնար կդարձներ դեդուկտիվ մեթոդներով ձեռք բերված շատ ճշմարտությունների հայտնաբերումը։ Բացի դրանից գիտական սիստեմները, առանց դեդուկտիվ խիստ մեթոդների կկորցնեին իրենց համառոտակիությունը և հիմնավորվածությունը։ Իսկ մյուս կողմից էլ «խիստ ձևական եզրակացությունները ևս չի կարող շատ դեպքերում մտքի առաջադիմությանը նպաստել, որովհետև ետադրությունն իսկապես պետք է հաստատ կամ ստույգ լինի, որպեսզի վերին նախադասությունը ճիշտ լինի և այդ պատճառով «շրջանաձև պտույտ» է բոլոր մարդկանց մահկանացու լինելուց եզրակացնել, որ Կիրակոսն էլ մահկանացու է»[25]։

Նշված թերություններից զերծ մնալու ելքը, Իս. Հարությունյանը տեսնում է այդ երկու մեթոդների նպատակահարմար միացման մեջ։ Ստացված նոր մեթոդը, գրում է նա, կլինի գիտական, որը «երկուսի թերությունները ևս անվնաս կդարձնէ. առավելություններն ավելի ուժ կտա և մեկն իբրև բնական և անհրաժեշտ լրացուցիչ միջոց գործ կդնէ մյուսի համար»[26]։

Ըստ Իս. Հարությունյանի այդ մեթոդը կունենա հետևյալ աստիճանները՝

Հետազոտության ենթակա բնագավառի երևույթների առանձնացում և փորձարկում, իսկ հետո նրանցից ընդհանուր օրենքների արտածում։ Այնուհետև ստացված օրենքներից մասնավոր ճշմարտությունների հայտնաբերում, այդ ճշմարտությունների սահմանում և ձեռք բերված նոր գիտելիքների հաստատում փորձի միջոցով։

Միասնական մեթոդի աստիճանների վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակը հիմնականում ճիշտ է ըմբռնում փորձի դերը իմացության պրոցեսում գտնելով, որ իմացությունը սկսվում է իրականությունից և նորից վերադառնում է այնտեղ ավելի խոր ու պարզ հայացք ունենալով իրերի և երևույթների էության և հարաբերության մասին։

Իս. Հարությունյանի «Տրամաբանություն» աշխատությունը առաջինը լինելով հայերեն լեզվով թիֆլիսահայ իրականության մեջ, երկար ժամանակ օգտագործվել է որպես տրամաբանության ձեռնարկ, մեծ դեր խաղացել մեր իրականության մեջ տրամաբանության տարածման և զարգացման գործում։ Լավատեղյակ լինելով իր ժամանակի եվրոպական տրամաբանական մտքին, ինչպես նաև ելնելով հայ տրամաբանական մտքի լավագույն ավանդույթներից, նա քննադատորեն է մոտենում տրամաբանության, որպես գիտության այդ ժամանակաշրջանում տարածված կարծիքներին և հանդես է գալիս որպես ինքնուրույն մտածող։ Հակադրվելով տրամաբանության հոգեբանական ուղղությանը, նա որոշակիություն է մտցնում տրամաբանության առարկայի մեջ, գտնելով, որ տրամաբանությունն ու հոգեբանությունը մտածողությունը ուսումնասիրում են տարբեր տեսանկյուններից, տարբեր եղանակներով։ Դեռ ավելին, ի հակադրություն ավանդական տրամաբանության որոշ ներկայացուցիչների, որոնք տրամաբանության առարկան սահմանափակում էին միայն մտահանգումներով, Իս. Հարությունյանը գտնում է, որ տրա-

25 Նույն տեղում, էջ 232։
26 Նույն տեղում։

մաբանության առարկան են կազմում որքան մտահանգումները, այնքան էլ դատողությունները ու հասկացությունները։

Գիտակցելով, որ տրամաբանությունը սերտ կերպով առնչվում է իմացաբանության հետ, նա դնում է նաև ճշտության և ճշմարտության հարցը՝ ընդգծելով, որ ճշմարտության անհրաժեշտ թեև ոչ բավարար պայմաններից է նաև ճշտությունը։ Իս. Հարությունյանը ճիշտ է լուծում նաև տրամաբանական ձևերի և իրականության փոխհարաբերության հարցը՝ գտնելով, որ տրամաբանական ձևերը օբյեկտիվ իրականության ծնունդ են։

ПРЕДМЕТ ЛОГИКИ ПО ИСААКУ АРУТЮНЯНУ

С. А. ШАХБАЗЯН

Резюме

Исаак Арутюнян (1865—1928), выступая против психологизма, находит, что логика и психология как науки не только нетождественны, но и различаются своим предметом и методом исследования. Если, по его мнению, психология стремится показать процесс возникновения мышления и занимается вопросом освещения психических процессов, то логика исследует мышление только с точки зрения его формы.

В принципе разделяя традиционную точку зрения, он абсолютизирует роль дедуктивных умозаключений, считая индуктивные только «необходимыми дополнениями логических правил».